

Հոգեբանական շարքին կը պատկանին գաղափարներու շարժումութիւնը, անոնց ընթացքը որ առանձնապատուկ արտայայտութիւնն է ցեղի մտաւորական կազմի: Յեղի ոգին է որ կը ղեկավարէ ժողովուրդի հաւատալիքները, անոր գաստիարակութիւնը, արուեստը, ևն., մի խօսքով քաղաքակրթութիւնը:

Յիգիւքական շարքին կը պատկանին ժամանակագրական պատմութիւն մարդերու ու գործերու, որի մէջ կ'երևայ ընկերական ու պետական կազմի ձևը, այդ կազմութեան յաջորդական աստիճանը, ուրիշ ցեղերու հետ ունեցած չփոմը՝ որ արդիւնքն է Յեղի կամքին: Լեզուն, միջավայրը, ու անոնց զարգացական չափերը ազդեցութիւն ունին այդ յատկանիշերը կազմելուն մէջ:

Ընկերաբանները կը գտնեն որ հետազոտող մը չպիտի բաւականանայ ըստ սովորականի իրողութիւնները բանաձևելով միայն գրի առնել, այլ բանաւորապէս ու անոնց խառնով մեկնել այդ իրողութիւնները. չափմանափակուիլ միայն ցուցնելով, այլ որոնել անոնց գոյութեան իրաւունքը:

Այս մեկնակէտն սրելով մենք կը զիմենք Քիւրդերու պատմական անցեալին. հետաքրքրուած ենք այն զիմնականներով ու պատմագէտներով՝ որոնք Քիւրդերու ամբողջական էութիւնը բմբռնելու հետեւած են:

Ասոնցմէ մէկն է Բրօֆէսէօր Lerch, որու հայեացքները շատ նշանակալից են թէ գիտական և թէ քաղաքական տեսակէտէ:

«Քիւրդերը իրենց շատ մը առնչական յարաբերութիւններով կը դրաւեն ազգազրազէտ պատմարանի ուշադրութիւնը. ըստ պատմական յարաբերութեանց մենք կը տեսնենք իրենց մէջ սերունդը այն Իրանեան ռազմիկ և ուժեղ Խաղտացիներուն՝ որոնք արդէն երրորդ հազարամեակի մէջ՝ մինչև Փրկչական թուականը, իբր պատերազմիկ ոգւով լի լեռնականներ իջան Տիգրիս—Եփրատեան հովիտը, ու այստեղ նուաճեցին Բարեւունեան տկար Սեմիտական ցեղը. ինչպէս հաւանաբար Ասոր